# 314 Երբ ճանապարհ եմ դուրս գալիս,

1. Երբ ճանապարհ եմ դուրս գալիս,
Իմ առջևից ես Դու գնում
Եվ ճամփան ես ինձ ցույց տալիս
Ու չարիքից հեռու պահում:

Ինձ՝ օտարիս, եղբայր դարձար,
Միայնակիս՝ անկեղծ ընկեր,
Ոչ մի վայրկյան չհեռացար,
Հիսուս օրհնյալ, քաղցր իմ Տեր:

2. Երբ տխուր եմ, հույս ես տալիս,
Երբ հոգնած եմ՝ ինձ զորացնում,
Ծնողիցս շուտ ես գալիս
Ու ինձ օգնում ամեն հարցում:

3. Դու իմ ճամփան ես միշտ հարթում,
Որ ոտքերս չառնեն քարին,
Եվ կյանքս ես ապահովում
Ու սիրալիր ժպտում բարի:

4. Երբ հուսահատ արտասվում եմ,
Հույս ես տալիս, գոտեպնդում,
Երբ ծնկում եմ, փառաբանում,
Խոնարհվում ես, ինձ գուրգուրում:

5. Այնքա՛ն մեծ սեր ունես, Հիսո՛ւս,
Որ չեմ կարող խոսքով ասել,
Դու կորսված, օտար մեկիս
Քո սուրբերի հետ ես դասել: